

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐԻԿԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ
Պետական կառավարչական հիմնարկ,
ՀՎՀՀ 05800466, ՇԻՐԱԿ ԱԽՈՒՐԻԿ
ԱԽՈՒՐԻԿ

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Հայտնում ենք Ձեզ, որ ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի էլեկտրոնային կառավարման համակարգի, այդ թվում՝ հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների չկատարված ընդհանուր հարկային պարտավորություններից 505348 դրամ գումարը, այդ թվում ապառք՝ 426637 դրամ, տույժ՝ 20136 դրամ, տուգանք՝ 58575 դրամ, որից՝

1. **Սոցիալական վճար (ամսական)** - պարտավորություն՝ 37842 դրամ, ապառք՝ 36137 դրամ, տույժ՝ 1705 դրամ, տուգանք՝ 0 դրամ, որն առաջացել է՝ 2021թ. դեկտեմբեր ամսվա հաշվարկից, տույժը հաշվարկվում է <<Կուտակային կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի համաձայն

2. **Եկամտային հարկ** - պարտավորություն՝ 467506 դրամ, ապառք՝ 390500 դրամ, տույժ՝ 18431 դրամ, տուգանք՝ 58575 դրամ, որն առաջացել է՝ 2021թ. դեկտեմբեր ամսվա հաշվարկից, տույժը հաշվարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն, իսկ տուգանքը՝ 402-րդ հոդվածի համաձայն

Գանձելու նպատակով, համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Ի կատարումն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների, առաջարկում ենք սույն ծանուցումը ուժի մեջ մտնելու օրվա 3-րդ օրը, ժամը 11:00 ներկայանալ վարչական վարույթի լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և <կամ> առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս.Դավիթի 87ա:

Զներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

ՀԵՌԱԽՈՍ՝ 010-30-91-91

ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱՐ՝

91-71, 91-55, 91-68, 91-89, 91-65, 91-07, 91-47, 91-87, 91-48, 91-95, 91-05